

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության «Աշտարակ»
նոտարական տարածքի նոտարի օգնական,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի
ասպիրանտ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԵԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իրավունքի սկզբունքների համակարգում սոցիալական արդարության սկզբունքի հիմնախնդիրներին նվիրված գիտական վերլուծությունը, թույլ է տալիս եզրահանգելու այն մտքին, որ սոցիալական արդարության սկզբունքը ենթադրում է հետևյալը. իրավահարաբերությունները կարգավորող նորմերը իրենցում պետք է պարունակեն արդարացի հասարակական պահանջմունքների իրավաչափ հիմնադրույթներ, քանի որ սոցիալական արդարության սկզբունքի ճանաչմամբ պետությունը պարտավորվում է ապահովել մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ երաշխիքներ: Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է ասել, որ պետության կողմից սոցիալական ազատության սկզբունքի ճանաչումը միանշանակ ենթադրում է, որ յուրաքանչյուր պետական մարմին պարտավոր է ապահովել և պաշտպանել մարդու բնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն սոցիալական արժեքներ: Պետությունը սոցիալական ազատության սկզբունքի միջոցով ապահովում է անձի պաշտպանվածությունը՝ հնարավորություն և երաշխիքներ ընձեռելով անարգել իրականացնել անձնական, քաղաքացիական, տնտեսական ազատություններն ու իրավունքները:

Հիմնարաներ- իրավունքի սկզբունք, սոցիալական արդարություն, անհատ, պետություն, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն:

Իրավունքի համընդհանուր սկզբունքները հանդիսանում են այն ելակետային և պարտադիր գաղափարներներն ու հիմնադրույթները, որոնք ձևավորում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդհանուր ուղղվածության ընթացքը, գործում են իրավունքի բոլոր ոլորտներում և միաժամանակ երաշխավորում են մարդու իրավունքների և ազատությունների անարգել իրականացումը: Համընդհանուր իրավական սկզբունքները կազմելով ցանկացած իրավունքի ճյուղի և՛ բարոյական, և՛ իրավական հենքը՝ ապահովում են տվյալ իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնականոն և իրավաչափ զարգացումը:

Այս գիտական հոդվածում կփորձենք առավել մանրամասն անդրադառնալ համընդհանուր իրավական սկզբունքներից՝ սոցիալական ազատության սկզբունքին վերաբերող հիմնախնդիրներին:

Դարեր շարունակ մարդու ազատության և իրավունքների ճանապարհին առկա են եղել բազմաթիվ խոչընդոտներ: Այդ խոչընդոտներից մեկն էլ հանդիսացել է պետությունը, քանի որ միշտ օգտագործել է իր հզորությունը մարդու ազատությունը սահմանափակելու, նրա իրավունքները խախտելու և ոտնահարելու համար: Մարդկության պատմու-

թյան նոր դարաշրջանում մարդու և պետության փոխհարաբերությունները տեղափոխվեցին այլ իրավական հարթություն: Պետությունը սկսեց ճանաչել և հարգել մարդու իրավունքները: Նմանատիպ փոփոխությունը պայմանավորված էր անհատի իրավագիտակցության ձևավորմամբ և զարգացմամբ: Պետությունը գիտակցեց, որ մարդու իրավունքները և ազատությունները հարգելը և պաշտպանելը, իր պարտականությունն է, ուստի այն իրագործելու համար սկսեց ընդունել օրենքներ՝ նվիրված մարդու ազատություններին, իրավունքներին և պարտականություններին: Պետության կողմից օրենսդրական ամրագրումը երաշխիք է անհատի կողմից ազատ կենսագործունեություն ծավալելու համար¹: Արդյունքում անհատը պետության տարածքում ձեռք է բերում որոշակի իրավական կարգավիճակ, որի հենքը կազմում են հենց մարդու հիմնարար իրավունքները:

Արդի ժամանակաշրջանի սահմանադրությունները պետության և անհատի փոխհարաբերությունների իրավական կմախքը կառուցելու ընթացքում հիմք են ընդունում բնական, իրավական, ազատական հայեցակարգերը, և արդյունքում ստացվում է այն, որ ոչ թե մարդիկ են ստեղծված պետության համար, այլ պետությունը՝ մարդկանց:

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակալից աշխարհում մարդկային քաղաքակրթական զարգացման գաղափարական հիմք են հանդիսանում մարդասիրական գաղափարներն ու արժեքները:

Յուրաքանչյուր քաղաքացիական հասարակությունում մարդը ընկալվում է որպես բարձրագույն արժեք: Քաղաքացիական հասարակության առանցքը հանդիսանում է ազատ անհատը: Ուստի ցանկացած հասարակություն և պետություն կարող է համարվել ժողովրդավարական և իրավական միայն այն դեպքում, երբ մարդը, նրա բնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվել են որպես իրական արժեքներ և ապահովված են գործուն և իրավական երաշխիքներով²: Ժողովրդավար և իրավական պետություններում երաշխավորվում են մարդու և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ անձնական ազատությունները: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան³:

Սոցիալական ազատության սկզբունքի ճանաչմամբ պետությունը երաշխավորում է ոչ միայն սեփական քաղաքացիների, այլ նաև յուրաքանչյուր անհատի անձնական, տնտեսական և քաղաքական ազատությունների և իրավունքների անարգել իրականացումը: Պետությունը սոցիալական ազատության սկզբունքին տալով սահմանադրական ամրագրում՝ ստանձնում է հետևյալ պարտականությունները.

- ճանաչել մարդու իրավունքները (պետությունը ընդունում է, որ անհատի բնական պահանջմունքները, բնական իրավունքից բխող մարդու անօտարելի իրավունքները համապարտադիր դարձնելու նպատակով՝ ամբողջ ծավալով պետք է ամրագրում սահմանադրությամբ և օրենքներով),
- պահպանել մարդու իրավունքները (պետությունը ձեռնպահ է մնում այնպիսի գործողությունների կատարումից, որոնք կարող են խախտել կամ սահմանափակել մարդու ազատությունը, քանի որ իրավունքները մարդուն տրված են ի ծնե),
- ապահովել մարդու իրավունքները (պետությունը, պետական մարմինները և պաշտոնատար անձիք պարտավոր են ձեռնարկել որոշակի դրական և ակտիվ գործողություններ՝ մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, դրանք իրական և երաշխավորված դարձնելու համար),
- պաշտպանել մարդու իրավունքները (օրենսդիր, գործադիր և դատական մարմինները՝

պարտավորվում են իրականացնել գործողություններ՝ ուղղված մարդու խախտված իրավունքները վերականգնելու, խախտումները կասեցնելու, մարդու իրավունքները խախտած սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար):

Ընդհանուր առմամբ սոցիալական ազատության սկզբունքը ենթադրում է անհատի կողմից անարգել աշխատանքային գործունեության ձևի, մասնագիտության, բնակավայր ընտրելու հնարավորության, ազատ կերպով իր ստացված եկամուտները տնօրինելու, սոցիալական ընդհանուր բարիքների բաշխմանը մասնակցելու և դրանք ազատ իրացնելու, ինչպես նաև՝ գործազրկությունից պաշտպանված լինելու իրավունքից օգտվելու հնարավորություն և այլն:

Պետությունը ճանաչելով սոցիալական ազատության սկզբունքը՝ միաժամանակ ապահովում է մարդու և նրա բնական իրավունքների ու ազատությունների բարձրագույն արժեք հռչակելու հանգամանքը՝ միաժամանակ նորմատիվ իրավական ամրագրում տալով անարգել իրագործման համար անհրաժեշտ և գործուն երաշխիքներին:

Պետության և իրավունքի տեսության մեջ սոցիալական ազատության սկզբունքը պարունակում է հետևյալ երեք տարրերը՝ անձնական ազատություն, քաղաքական ազատություն, տնտեսական ազատություն:

Անձնական ազատություն է համարվում այն ազատությունը, որը մարդուն տալիս է ֆիզիկական, հոգևոր և գափարական ազատություն⁴: Ազատ մարդը հանդիսանում է ցանկացած քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքը: Անհատը հանդիսանում է հասարակության միջուկը իր բնական պահանջմունքներով ու շահերով, որոնք ճանաչվում են պետության կողմից: Մարդը լինելով ի ծնե ազատ, պետք է ունենա հնարավոր բոլոր իրավաչափ միջոցները սեփական ճակատագիրը տնօրինելու հարցում: Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով⁵: Անհատի անձնական ազատության ապահովման երաշխիքները վերջինիս հետ անխզելիորեն կապված իրավունքների համակարգն է, որոնք կոչված են կյանքի կոչելու, երաշխավորելու և պահպանելու մարդու ազատությունը: Անհատի ազատությունը երաշխավորելը և պահպանելը պետության հիմնական գործառնություններից է, քանի որ միայն պետությունը կարող է ապահովել այն մեխանիզմները, որոնք կերաշխավորեն անհատի ազատությունը:

Պետությունը պարտավոր է անհատի ազատությունը երաշխավորելու և կամայականություններից զերծ պահելու համար ստեղծել նորմատիվ իրավաչափ հենք ունեցող գործուն մեխանիզմ⁶։ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հանդիսանում է նորմատիվ և հիմնարար այն մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ և միջոցով պետությունը ապահովում է սեփական քաղաքացիների անձնական ազատությունների իրագործման երաշխիքները։ Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները վերագրված արժեքներ են, քանի որ մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները պայմանավորված չեն կրոնական, ազգային, քաղաքակրթական և տարածաշրջանային առանձնահատկություններով։ Բնական է պետությունները և ժողովուրդներն ունեն առանձնահատկություններ, սակայն մարդու էությունը և պահանջմունքները ամենուր միևնույնն են։ Հենց այս հանգամանքով է պայմանավորված մարդու իրավունքների և ազատությունների ընդհանրությունը։ Անհատի արժանապատվությունը ևս որպես նրա իրավունքների և ազատությունների անբաժանելի մաս՝ հարգվում և պաշտպանվում է պետության կողմից։

Ընդհանուր առմամբ, եթե փորձենք տալ սոցիալական ազատության անբաժանելի մասը կազմող անձնական ազատության բնորոշումը, ապա, կարելի է ասել, որ անձնական ազատությունը ենթադրում է անհատի ինքնուրույն կենսագործունեության համար հնարավոր բոլոր իրավաչափ գործոնների առկայություն։

Սոցիալական ազատության հաջորդ տարրը քաղաքական ազատությունն է։

Քաղաքական ազատությունը ենթադրում է, որ մարդը որպես բանական էակ, որն ունի հասարակական կյանքով ապրելու իրավունք՝ զերծ չի կարող մնալ քաղաքական գործընթացներից։ Քաղաքական կայունության հիմքերից մեկը հանդիսա-

նում է անհատի քաղաքական ազատությունը։ Եթե հասարակության մեջ չկա քաղաքական ազատություն, ապա վաղ թե ուշ պետական իշխանությունը կհանդիպի հասարակական լուրջ դիմադրության։

Սոցիալական ազատության հաջորդ բաղկացուցիչը տնտեսական ազատությունն է։ Տնտեսական ազատությունը ենթադրում է անհատի կողմից աշխատանքի ընտրության ազատություն, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն, սեփականության ձևի ընտրություն։ Ըստ էության, տնտեսական ազատությունը հնարավորություն է ընձեռում անհատին ազատ գործելու տնտեսական ցանկացած գործընթացներում՝ բնականաբար դրսևորելով իրավաչափ վարքագիծ։ Այս պարագայում էլ, պետության առաքելությունը կայանում է նրանում, որպեսզի ստեղծի երաշխիքներ՝ անհատի կողմից տնտեսական իրավունքների իրացման համար։ Տնտեսական ազատությունը լիարժեք իրական է համարվում այն դեպքում, երբ բավարարվում է անհատի հասարակական նյութական պահանջմունքները։

«Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը առավել հստակ կերպով է սահմանում սոցիալական ազատության սկզբունքի տարրերը։ Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, ինչպես նաև ապահովում են նվազագույն աշխատավարձի, համարժեք աշխատանքի դիմաց արդարացի աշխատավարձի, հանգստի, ժամանցի, վճարովի արձակուրդի բոլոր և անհրաժեշտ երաշխիքները ։

www.journal.lawinstitute.am

¹ Տե՛ս, Карташов В. Н. Теория государства и права, Ярославль., 2012, С.91-93
² Нерсесянц В.С. Общая теория права и государства, М., Норма, 2012, С.99
³ ՀՀ Սահմանադրություն /ընդունված 1995թ.հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով հոդված 4-րդ:
⁴ Маргузов Н.И., Малько А.В. Теория государства и права, Учебник, М., 2004, С.119
⁵ 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 1-ին: Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի փաստաթղթերի ժողովածու /պաշտոնական հայերեն թարգմանություն/ Երևան, 2001թ.:
⁶ Տե՛ս, Теория государства и права. под.ред. Алексеев С.С., Архипов С.И. и др., М., 2005, Норма, С.161-163
⁷ Marie Jean-Bernard, Human Rights Law Journal, Strasbourg, Arlington, 1966.

Լիանա Մալխասյան

Помощник нотариуса нотариальной
территории “Аштарак” министерства юстиции РА,
аспирант государственно-правового отдела
института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Проблемы принципа социальной справедливости в системе правовых принципов

Научный анализ, посвященный проблемам принципа социальной свободы в системе принципов права, приводит к заключению, что принцип социальной свободы предполагает следующее: нормы, регулирующие правовые отношения, должны содержать законные основоположения справедливых общественных потребителей, так как признанием принципа социальной свободы государство обязуется обеспечить необходимые гарантии для жизнедеятельности человека. Суммируя вышесказанное, можно сказать, что признание государством принципа социальной свободы однозначно предполагает, что каждый государственный орган обязан обеспечивать и защищать натуральные права и свободы как высшие социальные ценности. Государство с помощью принципа социальной свободы обеспечивает защищенность человека, давая возможности и гарантии беспрепятственно осуществлять личные, гражданские, экономические свободы и права.

Ключевые слова: принцип права, социальная справедливость, личность, государство, правовой, гражданское общество.

Liana Malkhasyan

Ministry of Justice RA of notarys
territory “Ashtarak”, Notary assistant
PhD of the Department of State and Legal
Studies of the Institute of Philosophy, Sociology
and Law of National Academy of Sciences RA

SUMMARY

The problems of social justice principle in the law principles system

In the law principles system the scientific analysis dedicated to the problems of social justice principle lets us come to the conclusion that the social justice principle assumes the following: norms, that regulate the legal relations, must contain legitimate fundamentals of justified public needs, as by recognizing the principle of social justice the state undertakes to provide guarantees needed for the vital activity of a person. Summarizing the above mentioned, we can say that the recognition of the principle of social freedom by the state definitely assumes that every governmental body must provide and protect a person's natural rights and freedoms as the highest social values. The state provides individual's protection with the principle of social freedom, giving opportunities and guarantees to freely implement personal, civil, economic freedoms and rights.

Key words: law principle, social justice, individual, state, legal, civil society.